Հաստատված է՝

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական

լեզվահասարակագիտական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի 2018թ.

դեկտեմբերի 5-ի № 3 նիստի որոշմամբ

ԵՊԼՀ գիտական խորհրդի նախագահ՝

Կ. Վ. Հարությունյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 12-ի N 16 նիստի որոշմամբ խմբագրված տարբերակ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում է «Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԼՀ) բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցման ուսանողների պրակտիկայի կազմակերպման, անցկացման ընթացակարգը, սահմանում է պրակտիկայի տեսակները, պրակտիկայի ղեկավարման, գնահատման ձևերը:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են ՀՀ օրենքները «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», ԵՊԼՀ կանոնադրությունը և իրավական այլ ակտեր:

3. Պրակտիկայի տեսակները, տևողությունը սահմանված են համապատասխան մասնագիտության կրթական ծրագրով:

4. Պրակտիկայի բովանդակությունը ուսումնական, հետազոտական, ստեղծագործական բնույթի գործնական խնդիրների լուծումն է մասնագիտությանը համապատասխանող գործունեության ոլորտում:

5. Պրակտիկայի ծրագիրը ներկայացվում է տվյալ կրթական ծրագրի մասնագրի նկարագրիչների միջոցով, որով սահմանվում են պրակտիկայի նպատակը,

նախատեսվող աշխատանքները, դրանց տեսակը, կատարման վայրը, կրթական վերջնարդյունքները, գնահատման մեթոդները և չափանիշները:

6. Պրակտիկան անցկացվում է մասնագիտական կրթական ծրագրի որակավորմանը համապատասխանող ուսումնական և գիտական հաստատություններում, պետական կառավարման մարմիններում, համայնքային կազմակերպություններում, մասնավոր ընկերություններում, արտադրական ձեռնարկություններում, ինչպես նաև տվյալ մասնագիտության ոլորտային այն կազմակերպություններում, որոնք ունեն նյութատեխնիկական համապատասխան պայմաններ և մասնագետներ:

7. Պրակտիկան կազմակերպվում և իրականացվում է՝ ԵՊԼՀ-ի առկա և հեռակա ուսուցման գործընթացի կազմակերպման ժամանակացույցի համաձայն:

II. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. ԵՊԼՀ-ում բակալավրի կրթական ծրագրի ուսանողների համար սահմանվում է ուսումնական-մասնագիտական և մանկավարժական պրակտիկան, որը կազմակերպվում է ուսանողի մասնագիտական կարողությունները, հմտությունները և փորձառությունը զարգացնելու նպատակով:

9. ԵՊԼՀ-ում մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների համար սահմանվում են պրակտիկայի հետևյալ տեսակները՝

1) մասնագիտական-հետազոտական, որը կազմակերպվում է անհատական կարգով և բխում է մագիստրոսի թեզի պահանջներից ու բովանդակությունից, անհատական հետազոտական աշխատանքի պլանից:

2) մասնագիտական (մանկավարժական), որը կազմակերպվում է մագիստրատուրայի ուսանողների՝ մանկավարժական գործունեություն իրականացնելու կարողությունների զարգացման նպատակով:

(կետը խմբագրվել է ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 12-ի N 16 նիստի որոշմամբ)

10. ԵՊԼՀ-ում պրակտիկան կազմակերպվում և իրականացվում է՝ ԵՊԼՀ ռեկտորի և կազմակերպության միջև կնքված պայմանագրի, տվյալ մասնագիտության ուսումնական պլանի համաձայն: Պայմանագրով ամրագրվում են պրակտիկայի կազմակերպման, տեղերի թվի, ուսանողների քանակի, ղեկավարման հիմնական դրույթները՝ ղեկավարի, պրակտիկանտի իրավունքներն ու պարտականությունները, պրակտիկայի վճարովի կամ անվճար կազմակերպումը:

11. Պրակտիկան սկսելուց ոչ պակաս, քան 15 օր առաջ մասնագիտական կրթական ծրագրի պրակտիկայի ղեկավարը համապատասխան կազմակերպությանը տեղեկացնում է պրակտիկայի մեկնող ուսանողների թվի, պրակտիկայի ժամկետների, նյութատեխնիկական անհրաժեշտ պայմանների մասին:

12. Պրակտիկան սկսելուց ոչ պակաս, քան 7 օր առաջ ԵՊԼՀ ամբիոնի վարիչը, գիտաուսումնական կենտրոնի ղեկավարը և մասնագիտական կրթական ծրագրի պրակտիկայի ղեկավարը ուսանողներին տրամադրում է պրակտիկայի թղթապանակը, պարզաբանում է աշխատանքի պայմանները և պահանջները:

13. ԵՊԼՀ-ի բակալավրի կրթական ծրագրի ուսանողը մասնագիտական համապատասխան ամբիոնի առաջարկությամբ ընտրում է պրակտիկայի վայրը:

14. Որոշակի դեպքերում ուսանողը կարող է անցնել անհատական պրակտիկա: Ուսանողը անհատական պրակտիկա է անցնում իր դիմումի, պրակտիկայի վայրից բերված համաձայնագրի և անհատական պրակտիկայի անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա:

15. Անհատական պրակտիկայի կազմակերպման դիմում-հայտ ներկայացնող ուսանողները կից պետք է ներկայացնեն համապատասխան փաստաթղթեր:

16. Կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցման պրակտիկանտ ուսանողի ամենօրյա բեռնվածությունը կազմակերպությունում կազմում է 6 ակադեմիական ժամ:

17. Պրակտիկայի ողջ ընթացքը ուսանողի կողմից արձանագրվում է պրակտիկայի օրագրում:

III. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

18. Պրակտիկայի կազմակերպման և հսկողության համար անմիջական պատասխանատվություն են կրում ֆակուլտետի դեկանը և մասնագիտական համապատասխան ամբիոնները և գիտաուսումնական կենտրոնները:

19. ԵՊԼՀ ամբիոնի վարիչը (գիտաուսումնական կենտրոնի ղեկավարը) կամ մասնագիտական կրթական ծրագրի ղեկավարը պրակտիկայի անմիջական ղեկավարի հետ՝

1) նախապատրաստում է պրակտիկայի մեկնող ուսանողների հրամանագրման գործընթացը,
2) ֆակուլտետի խորհրդում նախապատրաստում և քննարկման է ներկայացնում պրակտիկայի գործընթացին վերաբերվող հարցերը,
3) մանկավարժական պրակտիկայի դեպքում վերահսկում է պրակտիկայի մեթոդիստի, մանկավարժի, հոգեբանի և պրակտիկայի այլ պատասխանատուների գործունեությունը,
4) համապատասխան կազմակերպության պրակտիկայի ղեկավարների վարձատրությունն իրականացնելու նպատակով պատրաստում և ԵՊԼՀ-ի հաշվապահություն է ներկայացնում ֆինանսական անհրաժեշտ փաստաթղթեր (հարկային հաշիվ, կատարողական ակտեր և այլն),
5) վերահսկում և գնահատում է պրակտիկայի ընթացքը և արդյունավետությունը, ամփոփում է պրակտիկայի հաշվետվությունները:

20. Պրակտիկայի անմիջական ղեկավարը մասնագիտական տվյալ ծրագրի պրակտիկան անցկացնող անձն է: Պրակտիկայի անմիջական ղեկավարի՝ տվյալ

ուսումնական տարվա ուսումնական բեռնվածությունը հաշվարկվում է՝ համաձայն ԵՊԼՀ պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածության ծավալի, կառուցվածքի և հաշվարկի նորմերի կանոնակարգի:

21. Պրակտիկայի անմիջական ղեկավարը՝

1) սահմանված կարգով կազմում և ամբիոնի քննարկմանն է ներկայացնում պրակտիկայի աշխատանքային ծրագիրը,

2) պրակտիկայի ծրագրի հաստատումից հետո սույն կարգի 5-րդ կետից բխող միջոցառումների կատարումը,

3) սահմանված կարգով և պրակտիկայի ծրագրին համապատասխան՝ վարում է ուսանողների պրակտիկան և ապահովում գնահատման գործընթացը,

4) իրականացնում է պրակտիկայի բովանդակությունից բխող այլ գործառույթներ:

IV.ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

22. Պրակտիկան գնահատվում է, եթե ուսանողը մասնակցել է պրակտիկային, կատարել ծրագրով նախատեսված առաջադրանքները, սահմանված ժամկետում ներկայացրել պրակտիկայի վերաբերյալ ավարտուն հաշվետվություն և/կամ պրակտիկայի օրագիրը (կարծիք-բնութագիր):

23. Ուսանողի պրակտիկայի գնահատումն իրականացվում է պրակտիկայի խմբի ղեկավարի կողմից՝ պրակտիկայի նկարագրով սահմանված փաստաթղթերի և գնահատման չափանիշների հիման վրա:

24. Համաձայն հաստատված առարկայական նկարագրի գնահատման չափանիշների ուսանողների պրակտիկայի արդյունքների գնահատումը կազմակերպվում է ոչ ուշ, քան պրակտիկայի ավարտից 20 օր անց:

25. Մասնագիտական պրակտիկա չանցած ուսանողը հեռացվում է ԵՊԼՀ-ից՝ ուսանողական իրավունքները վերականգնելու և պրակտիկան կրկին անցնելու հնարավորությամբ:

26. Ուսանողի պրակտիկայի կազմակերպման, իրականացման և գնահատման արդյունքները քննարկվում են մասնագիտական ամբիոնում և ֆակուլտետի խորհրդում:

27. Յուրաքանչյուր ամբիոն և գիտաուսումնական կենտրոն կարող է մշակել պրակտիկայի կազմակերպման իր ընթացակարգը՝ ելնելով իր մասնագիտական առանձնահատկություններից: